60. ՄՈՒԽՍԻՆ ՈՒ ՅԱՀՈՒԴԻՆ

Կէղնի ու չէղնի մուխսի մ՝ ու ուրեն կնիկըմ։ Մուխսին վեց դիր գացեր էր՝ մուխսութենի։ Կուզեր հեղըմ լե էրթեր, թմեր զյոթն։

Էդ մուխսին շատ հալով էր։ Կըսեր.— Կէրթամ, ըլլե իմ փարի ձեռքն իմ շիվարի։ Կնկան ըսեց.— Դու ճարըմ չը՞ս կըռնա հանի։

Կնիկն ըսեց.— Ես ի՞նչ ճար հանեմ, մարդ դու իս, ճարըմ մեկ լե դու հանիս։

Մտածեց, ըսեց՝ ի՞նչ էնիմ, ինչ չէնիմ։ Բերեց խազյաղու թանոքեսներու մեջ լըցեց, տակ լըցեց զօտկիք, զերես լըցեց զեթյաղի ու մըհորեց։ Ասեց.—Տանիք մըր դրկեցներուն մեկի տուն դնիք, թողինք էրթանք։

Վի՞ր տուն դնիք, վի՞ր չդնիք։

Կնիկն ըսեց.— Մզի դըրկից յահուդի մը կա, էնդորնե հարցու, տես տեխ կա՞։ Թե օր տեխ կա, տար դիր յահուդու տուն։

Էլավ գնաց, հարցուց, ըսեց.—Յահուդի ախբեր, ես միտք ունիմ էրթամ Երուսաղեմ մուխսութենի։ Քանի մը թանոքա զեթյաղի կա, տեխ կա քու տուն, բերինք դնիք, մկներ չծակին, հար դառնաք հ՝իգանք։

Յահուդին ըսեց՝ կա։

Ելավ էկավ առավ զուր թանոքեք, տարավ դրեց յահուդու տուն։ Յահուդին տեսավ օր՝ օղորթ, զեթյաղի էր լըցուկ մեջ, լեմեցին զբերան, թորկեց էկավ։

Էկավ ուր որպեսութեն տեսավ, կանչեց զուր աստված, առավ զուր կնիկ ու ընկավ ճամբախ, գնաց Երուսաղեմ մուխսութենի։

Էնդոնք թըղ էրթան ուրանց ճամբու հետ, մենք դառնաք յահուդու վրեն։

Յահուդին ավուրըմ մեկին տավաթ տվեր էր, կերակուլներու համար զեթյաղին պակսավ, գիշեր էր ու տուքներ լե փակուկ։ Չը կրոցավ գտներ, շիվար մնաց, կնկա միտկ թավակալի ընկավ մուխսու զեթյաղիք։ Ասեց.— Մարթ, չէ՞ օր մըր դըրկեց մուխսին էդա խըտար զեթյաղի բերեց թասլիմ էրեց մզի, գնաց Երուսաղեմ մուխսութենի, թանոքե մը բի բաց, նուկի մը խադարի հանե, սորա կառնիս կըլնաս վրեն, յախուտ զէնի կվերցունք մզի կուտինք, ուրիշ թանոքե մը կառնիք, դնիք տեխ։

Յահուդին ըսեց.—Կնիկ, ամանաթ, խըյամաթին ասած. կէղնի՞, չէղնի։

Կնիկն ըսեց.— Հ՚որ՞ չէղնի։ Ի՞նչ կըսե չէղնի։

Զարկեց յահուդին զշերեփ զեթյաղու թանոքի մեջ, օր զեթյաղի հաներ, տեսավ օսկին մեջ։ Ասեց—Կնիկ, էդ ի՞նչ բան է։

Կնիկն ըսեց.— Մարթ, հրմին-հրմին էղած էղեր է։ Հմկա նուկու մը խատարի զեթյաղի ճիրե, մըր գործ տեսնաք, տավըթի մարթիկ օր գացին, նոր կֆքրինք։

Մըսաֆըրներ էրթալուց սորա, յահուդին ու ուր կնիկ բերեց մեկ-մեկ բացեց զէդ թանոքեք։ Տեսան օր հար կեսն օսկի է լըցուկ, կիսուց վի լե՝ զեթյաղի։

Բերին զօսկիք դարդկեցին, վերցին, լցին զեթյաղի, բերան լեմեցին, վերցրին դրին իրարու վրա, իմալ օր մուխսին զառսեր էր, թողին էկան։

Տարին թմավ, մուխսին զուր մուխսութեն էրեց, գլուխն ուտե զուր մուխսութեն, թորկեց էկավ։ Էկան տուն։ Օրըմ էրկու մնաց, ասեց.— Կնիկ, էրթանք, զմըր թանոքեք առնինք, իգանք։

Ելան էկան, յահուդու տնեն առան զուրանց զեթյաղու թանոքեքն ու գացին։ Բացին օր մեկ հատ օսկի չկա մեջ, տփեցին ուրանց գլխուն ու աչքերուն։

Կնիկն ըսեց.— Մարթ, լալով գործ առաջ չէրթա։ Էրթանք յահուդուց հարցունք տեսնաք ի՞նչ է էրի էդ թանոքեսներու գլուխ։

Իրիկն ու կնիկ ելան առան զիրար, էկան յահուդու տուն։ Ըսին.— Յահուդի, դու ու քու աստված, մենք էրիր ինք, դու մ՚էնի, մեղավորութեն մերն ի։ Բի, ինչ օր հաներ իս, կիսինք՝ կես ընծի, կես քզի։

Յահուդին զձեռք քսեց պատ. ճիպ ինքյար. «Ի՞նչ կասիս, մուխսի, դու ընծի զեթյաղի իս տվի, տվի զքու զեթյաղին, առար գացիր։ Էլ հ՚իսնե ի՞նչ կուզիս, դու գացիր մուխսութենի, էկար, ըսինք՝ բալքիմ աստ-

ված շնորհքըմ իտա, բայց կերևի ինչ օր էլ կա, առեր է. ի՞նչ կասիս դու հըմկա, ամոթ է, ելի գնա։

Մուխսին ըսեց.—Ջանըմ, յահուդի ախբեր, դու զէդա բան հ՝որի՞ կէնիս իմ գլուխ, իմ թանոքեսներու կեսն օսկի էր լըցուկ, մեկել կեսն էլ՝ զեթյաղի։

Յահուդին ըսեց.— Մուխսի, քանի մենք չխոսացինք, դու առար ուզիվելոք կընցնիս. ելի, թող ջանըմի իմ տնեն, քանի աչքդ չոր է։

Մուխսին ելավ, քոռ փոշման առավ զուր կնիկ, քերեց զանկշի տակն ու թորկեց էկավ։

Ընծի կխոսա, էնդրան կխոսա, էնդրան կխոսա՝ թե հմլա բանըմ էրի. տարա զիմ փարեք, թասլիմ էրի իմ դրկից յահուդուն, հմկա դառցեր իմ, էկի, զօսկիք հաներ է, բերեր է լիք զեթյաղի լցի, տվի ընծի, ինչ կէնիմ, մուքամ չի դա։

Մուխսին է, վիրն օր ըսեց, ճարըմ չգտավ, զթարկ տվեց, ըսեց. «Մեկ լե էդ անաստվածին էրթամ յալվար յախա էզնիմ, բալքիմ բանըմ իտա ընծիկ»։

Գնաց ընկավ յահուդու կնկա օտկ ու ձեռք, իջուց մեկ օսկու լե, ախըր բան չտվին։

Դառնաք յահուդու վրեն։

Յահուդին տեսավ մուխսին ուրեն լաղաթ չի տա, թե էրթալով, գալով, թե էսդին ու ղէնդին պախարակելով, ասեց. «Ելնիմ էդա քաղքեն, թողիմ էրթամ ուրիշ քաղաք մը, ապրիմ ընծի»։

Ելավ առավ զուր կնիկ ու ճիժն, թորկեց գնաց ուրիշ քաղաքըմ, օր ազատեր մուխսու ձեռքեն։ Գնաց մըղազա բացեց ու նստավ առուտուր կէներ։

Դառնաք մուխսու վրեն։

Մուխսին յահուդու թարկ չիտա։ Ելավ առավ զուր կնիկն ու ընկավ յահուդու ետև էկավ յահուդու քաղաք ելավ դուրս։ Տեսավ օր ահագին մըղազեք բացեր է, ահագին խանութներ ու խաներ առուտուր կէնե։

Բռնեց էդոր դուքանն ու տուն կանավ։ Կէրթա դուքնի գին։ Կզարկին, կիգա տուն, տուն կզարկին։ Կէրթա դուքան, էնդոնք տաս փարա չըն իտա մուխսին կոխե ուր աչք, մուխսին լե զէնդոնց թարկ չի տա, անոթի ու ծառավ, տուր ու տկլոզ ընկեր է էդ քաղքի լենք ու էրկենք կօյըրտի ուր կնկա հետ։

Մարթու մը մեկ լըսեց զմուխսու գանգատ, ըսեց.—Մուխսի, ի՞նչ է էսոր ու էնոր կգանգատիս, կօլըրտիս, քու դարդին դարման էնող էղնի մեկ լե էդա քաղքի մեջ թղթըբաց Առաքել անվոր մեկըմ կա, ուր տուն լե ֆըլան տեխն է, թե օր չարե մ՝ էնե՝ էնի կէնե քզի։

Մուխսին զէդ օր հասկցավ, ելավ առավ զուր կնիկն ու գնաց, զինք թալեց էդ մարթու օտկ ու ձեռք։ Ըսեց.—Էդա հըմլա բանըմ էկի իմ գլուխ, կիլամ, կծիծղամ, էդ յահուդուց բանըմ չըմ կըռնա փրցու։

Առաքելն է, քիչըմ մտածեց։ Ասեց.—Մուխսի, քզի ինչ օր ըսիմ, դու կըռնա՞ս էնիս։

Մուխսին ըսեց.— Հա, հ՚որի չէ՞։

Ըսեց.— Մադամ օր կըռնաս հախեն գաս, առ քզի կես օսկի, գնա մեյդան։ Էնտեխ օր տավար ու մավար կծախին, տուր առ մեյմունի մը ձագ, բի ընծի։

Մուխսին առավ զկես օսկին, գնաց մեյդան, առավ մեյմունի մը ձագ, էկավ։ Բերեց տվեց թղթըբաց Առաքելին։

Առաքել ըսեց.—Մուխսի, չէ՞ օր էդ մարդու մըղազեն գինաս։

Մուխսին ըսեց.— Հա։

Ըսեց.— Ելի էրթանք, ընծի ցուց տուր ու դառցի էկո, հըմկա էլ քզի բան չմնաց։

Մուխսին առավ թուղթ բացող մարթն, էկավ։ Ցուցուց էդ յահուդու մըղազեն ու թողեց գնաց։

Առաքել մտավ ներս, տեսավ յահուդին աթոռքի վրա նստուկ է։ Աշկերտներ լե կանուկ ին հ՚առեջ, գողտուտիկըմ հանեց զյահուդու պատվերկ, դրեց ծոցք, դառցավ էկավ։

Էկավ ուր տուն, էդ պատվերկի վրեն իշքեց, մեծ պատվերկը քաշեց էնդոր վրեն։ Շինեց յահուդու պես փեսեն մարդըմ, յահուդու հալվընեբրու պես ձեռքըմ հալավ հագուց ուրեն ու կանկըցուց։ Կանկըցուց, մեյմունի ձագ բերեց թողեց էդոր հ՚առեջ ու սովրցուց կթըռվըռկցեր էրսընվեր, հաց-բան կուզեր։ Հըմալ սովրրցուց օր կըսեր. մեյմուն, քու հեր ո՞րն է, մեյմուն կէրթեր, կփաթվեր էդ պատվերկ, օտներ կլիզեր, ձեռքեր կլիզեր։

Տըսնուհինգ ավուր մեջ մեյմուն աղեկըմ թարբքյա էրեց։ Տասնուհինգ օր վերջ ջուհաբ էրեց մուխսուն՝ թըղ իգա։

Մուխսին ելավ էկավ։ Հանեց տաս օսկի, տվեց մուխսուն։ Ըսեց.— Կէրթաս էդ մարթու դուքնեն տըսնուհինգ օսկու ապրանք կբազրիս, կառնիս, տաս օսկին կիտաս, մեկել հինգ օսկուն կըսիս՝ չկա, թըղ մնա, քանի մ՚ ավուր սորա։ Թե օր ըսավ՝ չէ, ես հազըր կառնիմ, ըսե՝ դիր զքու տղեն իմ հետ, թըղ իգա տուն, իտամ, առնե իգա։ Կառնիս զտղեն, կիգաս իմ մոտ։ Էն վախտ ինչ օր պետկն է,.-ես կսովրրցում քզի։

Մուխսին առավ զտաս օսկին, գնաց յահուդու մոտ։ Տասնուհինգ օսկու առուտուր էրեց, զտաս օսկին հազըր տվեց, հինգ օսկի մնաց, ըսեց՝ սորա կիտամ։

Յահուդին ըսեց.—Չէ, անկարելի է, էդ տեսակ բան չէղնի։

Մուխսին ըսեց.—Մադամ օր չէղնի, տղեն թող հ'իգա իմ հետ, իտամ, առնե հ'իգա։

Յահուդին ըսեց.— Շատ աղեկ։

Դրեց զտղեն հետ, ինք ու մուխսին հ'իտրաց էկան թղթըբաց Առաքելի խեչ։

Առաքել վերցուց զգլուխ վի, տեսավ օր մուխսին էկավ։ Ըսեց.— Մուխսի, էկա՞ր։

Ըսեց.—Հա, էկա։

Առաքել վերուց զյահուդու տղեն պահեց։ Ըսեց.—Մուխսի, էկո հ'ոդա։

Մուխսին էկավ հ'առեջ։

Բերեց զմեյմունի ձագ, թասլիմ էրեց մուխսուն։ Ըսեց.— Առ էդա մեյմունի ձագ։ Կառնիս կէրթաս քու տուն, ինչ ժամանակ օր յահուդին էկավ հարցուց՝ թե իմ տղեն իմա՞լ էղավ, կըսիս՝ հան քու տղեն, կբերիս մեյմունի ձագ, կկանկըցուս հ'առեջ։ Կըսե՝ էղի իմ տղեն չէ։ Կըսիս՝ ճամբու հետ կիգենք, ես ճամբախ չընք գինե, հ'ընցա կարմընջիցըմ, տղեն իմ հ'առեջն էր, ես տղի ետևն ենք։ Հանկարծ կարմնջից քարըմ փրցավ, տղեն ընկավ կարմնջի տակ, վազի գացի բռնի, ելավ մեյմունըմ։ Էդա քու տղեն։

Մուխսին առավ տղեն, գնաց ուր տուն։

Մենք թողենք մուխսին հ'ոդի, դառնաք յահուդու վրեն։

Յահուդին է, մինչև իրկուն իշքեց, տեսավ օր տղեն ու մուխսին չէկան։ Ելավ, հարցընելով գնաց մուխսին գտավ։ Ըսեց—Մուխսի, աստծու սիրուն էղնի, հ'ու՞ր է էդ տղեն։

Մուխսին ու ուր կնիկ գրկած են զմեյմունի ձագ, նստած։ Ըսին.— Էդա քու տղեն։

Թորկելու պես գնաց փաթվավ յահուդու օտներ։

Յահուդին օտներով կզարկեր.—Ջանըմ, իմ տղեն էդ հ'որի՞ պիտի էղնի, էտի մեյմունի ձագ է։

Մուխսին ու ուր կնիկ ըսին.— Մենք իմա՞լ էնեք, էդ է քու տղեն։ Հ'որի՞ կնեղենաս ու կզարկիս։

Մուխսին ըսեց.—Էկա ֆըլան կարմընջեն կընցնեք, խրջիմ մարթ ու քոռ մեկ է, կոխեցինք քարի մը վրա, քու տղեն փրթավ, գնաց ջրի մեջ։ Վազեցի ետևեն օր բռնեք, տեսա՝ դուրս էլավ էդա մեյմունի ձագ։ Ես ի՞նչ էնիմ, քու տղեն էդ է։

— Հայ հավա՛ր, հայ մադա՛թ, էդա հըմլա բան չէղնի։ Մուխսի, աստծու սիրուն էղնի, հարիր օսկի կիտամ քզի, բի զիմ տղեն տուր։

Մուխսին կըսե.— Ես խոմ քու տղեն չկերա, հարիր օսկի չէ, հազար լե իտաս, ես հ'ուստե՞ն բերիմ իտամ, աստված հմլա էրեց։

Ելավ քոռ-փոշման թորկեց, էկավ ուր տուն։

Տուն մտնելու պես, կընիկն ըսեց.—Յա՛, մարթ, իմ տղեն հ'ու՞ր է։

Խաբեց զկնիկ, ըսեց.—Հմկա կիգա։

Կնիկն իշքեց, տեսավ օր տղեն չէկավ, հ'անգրցավ։ Ըսեց.—Մա՛րթ, քու աստծու սիրուն էղնի, իմ տղեն հ'ու՞ր է։

Իրեք անգամ հարցուց, իրեք անգամ լե խաբեց։

Հ'եր տեսավ օր խաբելով չէղնի, ասեց.—Կնիկ, քինե պահիմ, աստրծուց ի՞նչ պահիմ, ահլ ու քեֆյաթ հմլա էղավ։

Կնիկն օր էդ բան լսեց, տփվավ ու լաց.— Ախ լըմըն լաո, ախ լըմըն լաո։

Ելան էրկուս մեկտեխ էկան մուխսու տուն, ընկան մուխսու կնկա օտկ ու ձեռք։ Ըսին.—Աստծու սիրու խաթրի համար էղնի, ինչ օր հ'ուզիք, կիտանք, թաքելան մըր տղեն բերեք տվեք, առնիք էրթանք։

Մուխսին ու ուր կնիկ ըսին.—Էս է ձըր տղեն, կուզիք՝ տարեք, կուզիք՝ մը տանեք։

Իրիկ ու կնիկ փոռ փոշման թորկին էկան տուն։ Մինչև լուսուն քուն ու սթրում չէղան։

Լուսցավ։ Գացին փաշին գանգատ էրին։ Փաշեն կանչեց զէդ մարթ, առավ գնաց։ Մուխսին հ'եր օր գնաց, մեյմունի ձագ լե հետ տարավ։

Փաշեն հարցուց մուխսուց, ըսեց.—Էդա մարթու տղեն հ'ու՞ր է։

Մուխսին ասեց.—Էդ մարթու տղեն էդա է։

Փաշեն ասեց.— Էդ մեյմունի ձագ է, տղա չէ։

Իմալ օր մենք պատմեցինք, պատմեց էդ փաշին՝ թե՝ էկանք կարմընջից կընցնեք, հմլա էղավ։

Փաշեն մուխսուն ըսեց.—Դու էլի դուրս։ Յահուդուն ըսեց.—Դու արի հ'ոդա։

Բերեց յահուդին ներս, մաճլիս նստուկ էր։ Յահուդին նստըցուց էդ մաճլիսի մարթերու մեջ ու մեյմունի ձագ թողեց։ Էդ կայենական մարթոց մեկին չմոտեցավ, գնաց ելավ յահուդու չոքերուն 'ու գլուխ մտուց յահուդու դնչի տակ։

Փաշեն յահուդուն ըսեց.—Զարկ էդ թերմաշ, տուր ցած։

Յահուդին ինչ խըտար զարկեց, տվեց ցած, մեյմունի ձագ նորեն ելավ։

Սորա փաշեն ըսեց.—Բռնեք էդ մայմունի ձագ։

Բռնին տարան ուրիշ հ'օդե մը։

Ասեց.—Հանեք զյահուդին դուրս։

Ցահուդին էնեցին դուրս։

Ըսավ.— Բերեք մեյմունի ձագ։

Բերին թորկին հ՝օդի օրթոլախ։ Քսան, քառասուն, հիսուն մարթ կար հ՝ոդի, մեկին չմոտեցավ։

Ըսավ.— Վերցեք մեյմունի ձագ։

Վերցին։

Ըսին.— Բերեք յահուդին ներս։

Բերեցին։

Թորկեց մեյմունի ձագ, էմլե գնաց էդ մարթու չոքերուն ելավ, քիս-վրոտավ պագտվավ։

Իրեկ հեղ էդպես էրեց։ Տեսան օր յանղլիշութեն, էվել պակաս-չկա մեջ։

Ասեց.— Ցահուդի, առ զքու տղեն, գնա։ Քանի օր քու տղեն լե չէ, էդա հմլա քու վրեն ուրախութեն կէնե, սիրվեր է քու վրադ, քու տղեն է։

Իրիկ ու կնիկ առան զէդ մեյմուն, գացին։

Օրըմ, էրկու, լացին, թալին բռնին, ճար չկառցան գտնեն։

Չէ՞ մոր ճիկյար էր, իրկան ասեց.— Բի էդ մարթու ունեցած իտանքուրեն, զմըր տղեն առնիք։

Ելան զարկին, զարկվան, ուրանց ունեցած չունեցած ժողվեցին, ելան գացին մուխսու տուն։ Թե.— Մուխսի, աստծու սիրու խաթրի համար էղնի, թե կէղնի բերենք զքու փարեն իտանք, մարթ չլսե, բի մըր տղեն տուր մի, առնիք էրթանք։

Հանին զմարթու օսկիք, հանձնին ուրեն, առան ուրանց տղեն, ուրախցան, դառցան էկան ուրանց տուն։

Օր էկան ուրանց տուն, լուսուն ելավ գնաց Թաքավորին գանգատ էրեց, թե էդ մարթ հըմլա բան էրեր էր, վերցեր էր զիմ տղեն պահի, բերեր էր մայմունի ձագ թերբյա էրիր, դրի իմ տզի տեխ, գացի առա էկա։

Թաքավոր կանչեց մուխսուն, թե.— Էդ հ՝որի՞ն էրեր էր, էդ շնորհք քումն է՞, թե ուրիշին, մը վախենա, ճիշտ խոսա։

Ինչ ցավանք էնիք, ինչպես ես ձզի պատմի, մուխսին գլխեն հարտակ թաքավորին պատմեց ու ասեց՝ էդ շնորհք ֆըլան մարթուն է։

Թաքավոր ճամբեց թղթըբաց Առաքելն բերեց, քուռքըմ հագուց, ձիմը քաշեց հ՝առեջ, աֆարըմ ըսեց, ճամբեց ուր տուն։

Աստծուց իջավ իրեք խնձոր։ Մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։